

## ԱՐԵՎԱԿ ԳԱՐԱԿԵԶԵԱՆ

(1872-1963)

Հ. Բ. Բ. Միութեան կեղը. Վարչութիւնը ամենախոր ցաւով կը ծանուցանէ կոկտեալի մահը՝

Ա Ր Ե Ա Կ Գ Ա Ր Ա Կ Ե Զ Ե Ա Ն Ի

Նախկին երկարամեայ մեծանուն Նախագահ եւ ապա Պատուոյ Նախագահ եւ Բարեբար Անդամ Հ. Բ. Բ. Միութեան, որ տեղի ունեցաւ Սեպտեմբեր 24ին, Լարչմոնթի իր ընակարանին մէջ, Նիւ Եորբ:

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Սեպտեմբեր 26ին, ընտանեկան սեղմ շրջանակին մէջ:

ԴԻԷԼՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Անցնող Սեպտ. 24ին, Երեքարթի օր, Նիւ Եորբի մէջ մահացաւ Հ. Բ. Բ. Միութեան նախկին Նախագահներէն Տիար Սրշակ Գարակէօգեան, Կամաց հասուն տարիքի մէջ:

Հանգուցեալը ծնած է Կ. Պոլիս՝ 1872ին: Ընթացաւարտ ծննդավայրի Ռուպէրթ Գոլէնէն, կանուխէն ան ցոյց տուած է ընդունակութիւն առեւտրական ասպարէզի եւ հանրային գործունէութեան մէջ: 1897ին, իր կրտսեր եղբօր հնտ հիմնած է Ա. եւ Մ Գարակէօգեան արեւելեան գորգերու վաճառատունը: 1903ին Նիւ Ճրբագի մէջ կը հիմնեն գորգագործարան մը, որ հնտագիտէ ընդարձակուելով ներկայիս չորրորդին է իր տեսակէն բովանդակ Միացեալ Նահանգաց մէջ:

1920ին Արշակ Գարակէօգեան վերջնականապէս կը հաստատուի Միացեալ Նահանգներ: Նոյն տարին կ'անդամակցի Հ. Բ. Բ. Միութեան, եւ ապա կը դառնայ անոր Կեղրոնական Կոմիտէի Նախագահը: 1942ին կ'ընտրուի Ընդհ. Նախագահ նոյն Միութեան:

Իր Նախագահութեան շրջանին Հ. Բ. Բ. Միութիւնը մեծապէս բարգաւաճեցաւ եւ իր անդամներու թիւը կրկնապատկուեցաւ: 1953ին, տարիքի յառաջացման պատճառով, քաջուեցաւ գործէ, պահելով Պատուոյ Նախագահի ամփոփութ և շարունակելով մօտէն հնտաքրքրութիւն իր սիրած ու տարիներով անձնուիրարար ծառայած Միութեան գործերով:

Հանգուցեալը հնուատիս էր եւ խոհուն, ու իր կշռադատուած խօսքը մեծ արժէք ունէր Հ. Բ. Բ. Մ. ի ժողովներուն մէջ: Ան մէկն էր այն հայորդիներէն՝ որոնց ներկայութիւնը վիճառուած է միշտ եւ որոնց մահուան — հոգ չէ թէ խիստ յառաջացեալ տարիքի մէջ — ծգած պարագալ երկար ատեն մնացած է զգալի:

«Միոն» այս առթիւ իր վշտակցութիւնները կը յայտնէ Հանգուցեալի պարագաներուն եւ Հ. Բ. Բ. Միութեան մեծ ընտանիքին, ու կը հայցէ Սմենակարողէն որ արժանի ընէ անոր հոգին իր լոյսերուն:

«Միոն», յանուն Սմեն. Ս. Պատրիարք Հօր եւ Ս. Ոթոռոյս Միաբանութեան, իր անկեղծ վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալ Սրբազնի հարազատներուն եւ երկնային խաղաղութիւն կը մաղթէ անոր տառապած այլ բարի հոգիին: